

ԴԻՑԱՆՎԱՆԱԿԻՐ ՔՈՒՐՄԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ն. Գ. ՄՆԻՔԱՐՅԱՆ

Հին Արևելքի մի շարք երկրներին հատուկ է եղել քաղաքների յուրահատուկ ձև՝ տաճարային քաղաքներ: Այսինքն՝ քաղաքներ, որոնք կառուցվում էին խոշոր պաշտամունքային կենտրոնների շուրջը, հնագույն տոհմական սրբատեղիների վայրում¹ և իրենց տարածքով տաճարային տնտեսության հետ մի ամբողջություն էին կազմում: Այդպես էր հին Իրանում, Բաբելոնիայում, Ասորիքում, Փոքր Ասիայում, որտեղ հնագույն ժամանակներից գոյություն ունեին ամբողջ տաճարային քաղաք-պետություններ²: Նման տաճար-քաղաքներում, հասկանալի է, իր մեծ դերն է խաղացել քրմությունը: Միևնույն ժամանակ այդ տաճարների զարգացման ցանցի վրա է հիմնված եղել այն հսկայական նշանակությունը, որ ունեցել է քրմությունը հիշյալ երկրների կյանքի բոլոր բնագավառներում:

Առկա աղբյուրները (Ստրաբոն, Պլուտարքոս), եղած մասնագիտական գրականությունը (ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան) թույլ են տալիս առավել կամ պակաս չափով պարզելու քրմապետի քաղաքական և տնտեսական ուժը Հին Հայաստանում և հարևան երկրներում:

Այսպես, խոսելով Կապադովկայի Կոմանա տաճարային քաղաքի մասին, Ստրաբոնը վերկայում է. «...քաղաքի բնակիչները կատանացիներ են, որոնք իբր ենթարկվում են թագավորին, բայց առավել հնազանդ են քրմին... Ընդհանրապես, թագավորից հետո քուրմը երկրորդ անձնավորությունն է Կապադովկայում, մեծ մասամբ նույնիսկ թագավորներն ու քրմերը պատկանում են միևնույն տոհմին»³: Նա նման տեղեկություն է հաղորդում նաև պոնտական Կոմանա քաղաքի մասին, որտեղ քուրմը կամ քրմապետը «համարվում էր իր կարևորությամբ երկրորդ դեմքը թագավորից հետո»⁴: Փոքրասիական տաճարային տնտեսությունների մասին աղբյուրագիտական նյութը, առհասարակ, բավական հարուստ է, և դա հնարավորություն է տալիս ուսումնասիրելու ոչ միայն տեղի տաճարների կառուցվածքը, նրանց իշխող և սպասարկու կազմը, այլև համեմատության մեջ դնելով հարևան երկրներում առկա համանըման երևույթների հետ՝ պարզելու դրանց ծագման ակունքներն ու կատարած դերը երկրի կյանքում:

Եթե տաճարային տնտեսությունների և նրանց իշխող կազմի զարգացումն ու բարգավաճումը կապված էին արտադրողական ուժերի, երկրի տնտեսական զարգացման, մասնավորապես ոռոգովի հողագործության զարգացման հետ, ապա կրոնական փոխազդեցության տարածման գործում զգալի դեր են խաղում նաև արտաքին նվաճումները: Հին Արևելքի տարբեր երկրների կրոնների միախառնման գործընթացը հատկապես ուժեղացավ մ. թ. ա. 6-րդ դարից՝ պարսից արքա Կյուրոս Մեծի արշավանքների շնորհիվ: Կրոնների այդ միախառնվելը շարունակվելով շուրջ երկու դար, նոր թափ ստացավ Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհամավալ պետության մեջ, հանդիսանալով համաշխարհային պատմության այն բարդ հասարակական-տնտեսական ու մշակութային զարգացման դարաշրջանի մի օղակը, որ հայտնի է «հելլենիզմ» անվամբ:

Որ հին Հայաստանը ևս դուրս չի մնացել այդ ազդեցության ոլորտներից և իր տնտեսական, ինչպես նաև մշակութային կյանքում առավել կամ պակաս չափով ենթարկվել է հարեվան երկրների ազդեցությանը, կարելի է ցույց տալ թեկուզ նրա հեթանոսական դիցարանի օրինակով: «Բուն հայեցի» աստվածները շատ հաճախ «թաքնված» են հունական, ասորական, իսկ հաճախ՝ իրանական աստվածների անունների տակ, և միայն մասնագետի մանրա-

¹ Всемирная история, Москва, 1956, т. 2, стр. 24.

² Ս. Մ. Կրկաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության ոլորտագետ, Եր., 1970, էջ 128:

³ Նույն տեղում, էջ 181:

⁴ Նույն տեղում:

կըրկիտ ու տընաջան աշխատանքն է պարզում այդ աստժոն ազգային նկարագիրը, երբեմն նաև՝ անունը:

Կրոնական նման միավորումներ կամ նույնիսկ սերտաճումներ գոյություն ունեին ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում և հատկապես Փոքր Ասիայում: Բացի արդեն հիշատակված գույզ Կոմանա քաղաքներից, այստեղ իրենց խոշոր հողաբնիկ կալվածքներով և աշխարհիկ-քրմական «դեկավար» դասով աչքի էին ընկնում Ջելան, Ամերիան, Տրանան, Մարիմեանս⁵, Օլբան⁶ Լեոնային Կիլիկիայում, Պեսինունտը՝ Փոյուզիայում⁷: Որպես կանոն, այս բոլոր պաշտամունքային կենտրոնները նվիրված էին մայր-դիցուհուն, կոչվեր նա Կիբելա, Դիդիսեանա, Անահիտ, Արտեմիս թե՛ Դեմետրա⁸: Մայր-դիցուհու պաշտամունքը շատ ուժեղ էր նաև Հայաստանում: Անահիտ դիցամոր պաշտամունքի մասին նորից վկայում է Ստրաբոնը «...Պարսից բոլոր աստվածները պաշտվում են նաև մարաց և հայոց կողմից, բայց Անահիտը պաշտամունքը հայոց մեջ գերազանցում է բոլորից, զանազան տեղեր նրա անվան տաճարներ են կանգնեցվում և հատկապես Եկեղիքում: Նշանակել են այդ տեղերում ստրուկներ և ստրկուհիներ...»⁹: Եկեղյաց գավառից բացի, որ հաճախ աստվածուհու անունով կոչվել է նաև Անահտական, հայտնի էին նաև հին Հայաստանի մյուս խոշոր պաշտամունքային կենտրոնները՝ Անին, Թիլը, Թորոհանը, Բագահառիձը, Աշտիշատը, Արմավիրը, ինչպես նաև իշխուհի նընակալների միջամտությամբ կառուցված Բագարանը, մյուս Բագարանը, Բագավանը, այնուհետև պատմիչների հիշատակած տեղանունները, որոնք արդեն պաշտամունքային իմաստ ունեն՝ Աթոռ Անահտայ⁹, Տիրինկատար, Երազամուլ¹⁰, Դարբնաց քար¹¹ և այլն: Վկայություններ կան այն մասին, որ հարուստ տաճարային տնտեսություններ (ստրուկներով և ստրկուհիներով) եղել են ոչ միայն Եկեղիքում, այլև Տարոնում՝ հռչակավոր Վահեվահյան մեծիանում Արմավիրում և այլուր: Ամենուրեք տնտեսության գլուխ կանգնած էր քրմությունը՝ իր աշխարհիկ ու կրոնական լայն արտոնություններով և իշխանությամբ: Իսկ գերագույն քրմապետը թագավորից հետո երկրորդ դեմքն էր երկրում: Խորենացու «Պատմության» մեջ պահպանված էր կու քրմապետերի պատմությունները թույլ են տալիս ենթադրելու, որ քրմապետը պատկանել է արքունական տոհմին և եղել թագավորի մերձավոր ազգականը՝ որդին կամ եղբայրը. երվանդունի Երվազ՝ եղբայր Երվանդ Կերշին արքայի և Մաժան՝ որդի Արտաշես Բ (ըստ Նարեկացու) արքայի: Նախքան նրանց մասին խոսելը, իբրև դիցանվանակիր քրմերի, մի քանի խոսք այդ երևույթի մասին Փոքր Ասիայի տաճարային տնտեսություններում: Դժվար է ասել թե՛ երբ է հանդես եկել այդ երևույթը (երբ քրմապետը կրում էր այն աստժոն անունը, որին սպասավորում էր), սակայն մ. թ. ա. 4—3-րդ դարերից սկսած, հունական տարրի ներթափանցման և տաճարային տնտեսությունների բուռն զարգացման հետ մեկտեղ, այն ավելի լայն տարածում է ստանում¹²: Իր տոհմը, սովորաբար, դիցանվանակիր քրմըն ծագեցնում է հունական որևէ հերոսից կամ տեղական աստվածությունից, ընդ որում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հունական անվան տակ հաճախ «թաքնված էր» տեղական որևէ աստվածություն¹³: Եվ եթե սկզբնական շրջանում դիցանվանակիր քրմի պաշտոնը ընտրովի էր, ապա հետագայում այն դառնում է ժառանգական և կենտրոնանում մեկ-երկու ազդեցիկ տոհմերի ձեռքում¹⁴: Կիլիկյան Օլբա տաճարային քաղաքի տարածքում կատարված պեղումները ի հայտ են բերել դիցանվանակիր քրմերի ամբողջ «տոհմագոյություններ»՝ Տակիրդներ, Օրսեիդներ, Ռոսգեսիդներ¹⁵: Սկսած 3-րդ դ. Օլբայի դրամների վրա հանդիպում են երկու տեսակի՝ Տակրոս և Ալաքս: Ստրաբոնի վկայությամբ՝ Օլբայի տաճարային տնտեսությունը նվիրված էր Օլբական Ջևսին, և թվում է, թե դիցանվանակիր քրմի մասին այստեղ ոչ մի ակնառի չկա: Սակայն կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Տակրոսը փոքրասիական Տարկու աստվածությունն է՝ որոտի, կայծակի անեղ աստվածը, որի պաշտամունքը շատ

⁵ У. Тарн. Эллинистическая цивилизация, Москва, 1949, стр. 139.

⁶ А. Периханян. Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959, стр. 57—79.

⁷ Ф. Зелинский. Религия эллинизма, Петроград, 1922, стр. 37.

⁸ Օտար անդրուները հայերի մասին, Եր., 1949, էջ 67:

⁹ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1947, էջ 260:

¹⁰ Ղ. Ալիջան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Կենտրոն, 1895, էջ 267-268:

¹¹ Խորենացի, Թուրք առ Ասիակ Արծրունի—Սատենագրութիւնը Մովսէսի Խորենացու Կենտրոնի, 1865, էջ 294:

¹² А. Периханян, նշվ. աշխ., էջ 75—77:

¹³ У. Тарн. նշվ. աշխ., էջ 138:

¹⁴ А. Периханян, նշվ. աշխ., էջ 75—77:

¹⁵ Նույն տեղում, էջ 59—60, 75—77:

տարածված էր Փոքր Ասիայում: Այդ աստվածը ծանոթ էր նաև հայերին՝ Տորք անունով¹⁶: Եվ եթե տաճարային տնտեսության մեջ գերագույն տիրակալը փոխարինվել էր հունական համագոր «տարբերակով»՝ Տարկուն դարձել էր Ջևս, ապա ջրմապետների անվան մեջ նա պահպանել էր իր նախնական, թեկուզ և աղճատված ձևը: Էլ ավելի հետաքրքիր է փյուրգիական Պեսիլունտ ջաղաքի օրինակը: Ջաղաքը ծնված էր մայր-դիցուհուն՝ Կյուբելեին և կառավարվում էր ջրմապետների կղեգիայի կողմից: Ընդ որում, ավագ ջրմապետը կրում էր Ատտիս անունը (Կյուբելեի տարփածուի)¹⁷: Այդ պաշտամունքը այնքան խորն էր արմատավորված, որ այն ընդունեցին և՛ եկվոր հույներն ու մակեդոնացիները, և՛ մ. թ. ա. 3-րդ դարի սկզբին այստեղ ներխուժած գալատները, որոնք մարզին տվեցին իրենց անունը՝ Գալատիա: Կերչիներս ոչ միայն ընդունեցին Կյուբելեի և Ատտիսի պաշտամունքը, այլև ժամանակի ընթացքում թափանցելով տաճարային համայնք, սկսեցին ակտիվ մասնակցություն ցուցաբերել ոչ միայն տաճարային, այլև երկրի ջաղաքական կյանքին: Պահպանվել է Պերգամոնի թավափորներ Ատտալուս 2-րդի և Էվմենես 2-րդի նամակագրությունը Պեսիլունտի տաճարի ջրմապետ Ատտիսի հետ: Այդ ժամանակաշրջանում ջրմապետը ղեկավարում էր պայքարը գալատական ցեղերի դեմ, թեև ջրմական կղեգիայի 10 անդամներից հինգը գալատներ էին: Գալատ՝ էր և ինքը՝ ջրմապետը, որ ավագը լինելով, կրում էր Ատտիս անունը: Այդ նամակագրության մեջ (ենթադրվում է, որ այն փորագրված է եղել Կյուբելեի տաճարի պատին) Ատտիսը հանդես է գալիս որպես թագավորին հավասար անձ, իսկ զինված պայքարը ներխուժող ցեղերի դեմ ցույց է տալիս, որ նա ունեցել է նաև ռազմական իշխանություն¹⁸:

Նենվելով հին Հայաստանի պատմությանը վերաբերող վիճաբանական և պատմագրական (թեկուզ և սուղ) նյութի վրա, կարելի է ասել, որ պատկերը նույնն է եղել նաև Հայաստանում: Ջրմապետը այստեղ ևս ունեցել է աշխարհիկ նշանակալից ֆունկցիաներ. եղել է թագավորից հետո երկրորդ դեմքը երկրում, ղեկավարել է որոշակի ջանակությամբ զորաբանակ, պատկանել է արքունական տոհմին և որպես ավագ ջրմապետ կրել է ծիսական անուն. այն ասածն անունը, որին սպասավորել է:

1911—1927 թթ. Արմավիր ջաղաքում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են երկու խոշոր քարակտորներ, որոնց վրա հունարեն փորագրված են թվով յոթ արձանագրություն: Այդ արձանագրությունները մինչև այսօր էլ ուսումնասիրության առնարկ են և կարևոր աղբյուր են Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար: Մեզ համար առավել հետաքրքրական է № 4 արձանագրությունը (Կ. Տրեքերի համարակալմամբ)¹⁹: Այն Արմավիր ջաղաքի թագավոր Միթրատի ուղեղծն է Երվանդ արքային, որտեղ Միթրատը ջաղաքացիների անունից դիմում է թագավորին և բարեմաղթություններ անում: Ուսումնասիրողներից շատերը (Մանանդյան, Թումանով, Սարգսյան, Կրկյաշարյան) արձանագրությունը վերագրում են հայոց վերջին Երվանդունի արքայի՝ Երվանդ 4-րդի ժամանակաշրջանին: Ըստ Մովսես Խորենացու, երբ Երվանդ Կերչիսը իր մայրաքաղաքը տեղափոխեց Երվանդաշատ, ապա՝ «...Նրանից հյուսիս... Ախուրյան գետի վրա շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն թե բազմիներն այնտեղ են սարքավորված, և այստեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուտքերը: Ծինեց նաև մեխյաններ և իր Երվազ եղբորը ջրմապետ նշանակեց»²⁰:

Արմավիրը մեզ հայտնի հնագույն պաշտամունքային կենտրոն է: Նրա հիմնադրումը Մ. Խորենացին վերագրում է Հայկի թոռներից մեկին՝ Արմանյակի որդի Արամայիսին²¹: Պատմա-հոր բավականին աղտոտ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ գոյության ողջ ընթացքում Արմավիրը եղել է ոչ միայն թագավորների նստավայր, այլև խոշոր պաշտամունքային կենտրոն. Արամայիսից մինչև Արա Գեղեցիկ և Անուշավան Սոսաններ, որը ձևնյալ էր Արմավիրի սրբազան անտառին, և մինչև Կաղարշակ թագավոր (ըստ Խորենացու ժամանակագրական համակարգի), որ «...Արմավիրում մեխյաններ շինելով արձաններ էր կանգնեցնում Արեգակին, Լուսին և իր նախնիներին»²²: Կարելի է ասել, որ նա վերակառուցում էր մեխյանը, այստեղ հաստատելով նաև իր նախնիների պաշտամունքը: Եվ այս Արևի ու Լուսնի տաճարի ջրմապետն էր № 4 արձանագրության մեջ հիշատակված Միթրատը, որը դիմում է թագավորին: Եվ թող չշփոթեցնի այն փաստը, որ նա ևս հորընդհանում է թագավոր: Նա Արմավիրի

¹⁶ Կ. Թումանով, Հայաստանի Որոնդեանները, Վիեննա, 1970, էջ 73: Ն. Աղոնց, Տորք աստված հին հայոց, Հայրենիք, Վիեննա, 1911:

¹⁷ Տե՛ս Փ. Зелинский, նշվ. աշխ., էջ 45:

¹⁸ Ս. Կրկյաշարյան, նշվ. աշխ., էջ 133:

¹⁹ К. Тревер. Очерки по истории культуры Древней Армении, М.-Л. 1953, стр 134—135.

²⁰ Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1949, էջ 110:

²¹ Նույն տեղում, էջ 26:

²² Նույն տեղում, էջ 75:

թագավորն է, Արմավիրի տաճարային քաղաքի քրմապետը, ավագ ջուրմը, դրա համար կրում է Միթրաս (Միիր) ծիսական անունը, և երկրորդ՝ նա թագավորի մոտիկ ազգականն է, որդին կամ եղբայրը (եթե հաշվի առնենք Ռորենացու տվյալները՝ եղբայրը, որին նա կոչում է Երվազ)։ Ռորենացին պատմում է նաև Երվազի մահվան մասին Բագարանում, որը նա ամրոց է կոչում²³։

4. Թումանովը իր «Հայաստանի Որոնդեանները» գրքում Ռորենացու Երվազ քրմապետին ուղղակի անվանում է Միթրաս. ...Հայաստանի վերջին Որոնդեան արքայն էր Որոնդես Դ... Ինքն ու իր եղբայրը Միթրաս, Արմավիրի Արևի և Լուսնի մեհեանի քրմապետը, յիշուած են Արմավիրի 1927 թ. գտնուած յունարեն արձանագրութիւններու մէջ և մեկնաբանուած Boilly-nova է և Մանանդեանէ։ Արձանագրութիւն մը կը բովանդակէ ուղերձ մը Միթրասէ առ Որոնդես արքայն և ուրիշ մը արքային ողբերգական մահուան կ'ակնարկէ²⁴։

Հայ պատմական ավանդությունը լրացնում ու հաստատում է այդ տվյալները։ Երվանդ արքայի թագավորության և նրա քրմապետ Երվազի պաշարը Արտաշես թագավորի դեմ։

Ասվաջանի պետք է ավելացնել նաև, որ Արևի աստվածությունը հելլենիստական ժամանակաշրջանում իրենից ներկայացնում էր բավական բարդ մի խառնուրդ։ Հատկապես Արևելքում, ուր իրար էին հանդիպել հունաց, պարսից և տեղական աստվածությունները, այն դարձել էր մի «ունիվերսալ» դիք՝ կոչվելով Ապոլլոն-Հելիոս-Հերմես-Հերակլես-Միիր-Վահագն (Արտազանես)²⁵։ Եվ այդ առումով շատ հետաքրքիր է, որ քրմապետը կրում է պարսից լուսի, կերակի, արևի աստծո անունը, բայց հունարեն ձևով՝ Միթրաս։ Միիրը նույնացվել է նաև հին հայոց ամենասիրելի աստվածներից մեկի՝ Վահագնի հետ²⁶։ Որ Վահագնը բացառիկ դիրք է գրավել հին հայոց դիցարանում, երևում է Ռորենացու մատյանից։ Նա գիտե ոչ միայն Վահագնի ծննդյան երգը, ոչ միայն նրա մասին պատմվող առասպելները, այլև նրանից սերող քրմական ընտանիքը՝ Վահունիներին, իրենց տոհմական կալվածքով՝ Աշտիշատի մեհենագյուղով, որտեղ գտնվում էր Վահեվախյան հռչակավոր մեխյալը։ Ռորենացին ակնարկում է նաև Վահունիների իշխող դինաստիայի հետ ունեցած ազգակցական կապի մասին²⁷։ Ըստ նրա՝ Վահունիները Վահագնի սերունդն էին, իսկ Վահագնը հայոց Տիգրան Երվանդյան թագավորի որդին էր։ Հայտնաբերված դրամագիտական նյութերից մենք գիտենք, որ Տիգրան 2-րդը նույնացվել է Վահագնի հետ և կրել է այդ անունը իր տիտղոսաշարում։ Նրա որդին՝ Արտավազ 2-րդը նույնացվել է Միիրի հետ²⁸։ Ռժվար է ասել, թե ինչն է այդպիսի բարդ հյուսք ստեղծել. իշխող դինաստիայի պաշտամունքի հաստատումը, որ հատուկ էր հելլենիստական աշխարհին²⁹, իշխող տիրակալի աստվածացումը և նույնացումը որևէ աստծո հետ, թե՛ քրմապետի ազգակցական կապը իշխող դինաստիայի հետ։ Թերևս բոլորը միասին։

Կարելի է ասել, որ բերված փաստարկներն ու ենթադրությունները հաստատում է նաև Միիր-Հելիոս Միթրասի մի ուրիշ օրինակ։ Ռոսքը Հայաստանի Արշակունիների հարստության հիմնադիր Տրդատ 1-ինի (մ. թ. 62—80 թթ.) Գառնիի վիմագիր արձանագրության և օտար պատմիչների- (Տակիտոս, Պիոն Կասսիոս) հաղորդած տեղեկությունների մասին է³⁰։

Հռոմեացի պատմագիր Տակիտոսը գրում է, որ հռոմա-պարթևական բանակցությունների ընթացքում, ի պատասխան կայսր Ներոնի պահանջի, որի համաձայն Հայաստանի գահի պարթևական թեկնածու Տրդատը պետք է Հռոմ ներկայանար արքայական թագը նրա ձեռքից ստանալու համար, պարթևական թագավոր Վաղարշը՝ Տրդատի ավագ եղբայրը, գրում է Ներոնին. «...Եվ Տիրիդատը մտադիր չէ թագավորական թագն ընդունելու համար հրաժարվել Հռոմ գալուց, եթե նրան չպահեին քրմության պարտականությունները»³¹։ Հայոց Տրդատ 1-ին թագավորը եղել է ջուրմ։ Այդ մասին վկայում է նաև Կասսիոսը։ Նկարագրելով մ. թ. ա. 65 թ. Հռոմում Տրդատի և Ներոնի հանդիպումը, պատմիչը, իմիջիպալոց, մեջ է բերում Տրդատի հետևյալ խոսքերը. «Ես հայտնվեցի քեզ՝ իմ աստծուն, երկրպագելու քեզ որպես Միթրայի»³²։ Տրդատ քրմապետի աստվածը Միիր-Հելիոս-Միթրան էր։ Եվ եթե, որպես ավագ քրմապետ, նա դիցանուն կրեր, ապա պետք է կրեր Արև-աստծո անունը։ Եվ իսկապես, Գառնիի տաճարի կառուցմանը նվիրված նրա հիշյալ արձանագրությունը սկսվում է հետևյալ բառերով. «Հելիոս

²³ Ռորենացի, էջ 116։

²⁴ Կ. Թումանով, Հայաստանի Որոնդեանները, Վիեննա, 1970, էջ 29։

²⁵ Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Ռորենացին, Եր., 1966, էջ 29—30։

²⁶ Թ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 40—41։

²⁷ Ռորենացի, էջ 54—55։

²⁸ Գ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 55—57։

²⁹ Նույն տեղում, էջ 23—78։

³⁰ К. Тресер, Նշվ. աշխ., էջ 94։ Ս. Կրկաշարյան, Նշվ. աշխ., էջ 132։

³¹ Տակիտոս (օտար աղբյուրները հայերի մասին), Եր., 1941, էջ 119։

³² К. Тресер, Նշվ. աշխ., էջ 94։

Տիրիդատես»³³: Արտահայտությունը մեկնաբանվում է տարբեր կերպ. և՛ որպես պարզապես «արև», և՛ որպես ածական՝ «արեգակնափայլ», և՛ որպես արձանագրության սկզբում աստծո հիշատակում³⁴: Տրդատի «Հելիոս» անվանումը կապվել է նաև իշխող թագավորի և դինաստիայի այն պաշտամունքի հետ, որն ընդունված էր հին Հայաստանում հարևան հելլենիստական երկրների օրինակով³⁵: Սակայն եթե համադրելու լինենք եղած տվյալները Արմավիրի արձանագրության հետ, կարելի է նաև ենթադրել, որ «Հելիոս» Տրդատ թագավորի դիցանունն էր՝ իբրև Արեգակի ավագ քրմի կամ քրմապետի:

Հարկ է նշել, իր Ապոլլոն-Միթրան բացառիկ դիրք էր զբաղում նաև հարևան Սելևկյան պետության կրոնական կյանքում, ըստ էության հանդիսանալով նրա գերագույն աստվածը: Ողջ Մերձավոր Արևելքում հռչակված էր Դաֆնիական Ապոլլոնի տաճարը, որ կառուցել էր հարստության հիմնադիր Սելևկոս 1-ին՝ Նիկատորը իր մայրաքաղաք Անտիոքի Դաֆնա արվարձանում: Ապոլլոն-Հելիոսի պաշտամունքը այնպես ծուլվեց Միթրայի պաշտամունքին, ինչպես Դեմետրիայի պաշտամունքը՝ փոքրասիական Մայր-Դիցուհուն: Հելլենիստական այդ երկու սինկրետիկ աստվածություններն ի վերջո մտնում են Արևելքի գլխավոր աստվածների «երրորդության» մեջ: Երրորդություն, որովհետև առաջինը և գլխավորը ամենուրեք շարունակում է մնալ Ջևս-Արամազդը՝ որպես թագավոր և հայր աստվածների³⁶:

Ասվածն ավելի հաստատուն դարձնելու համար նորից դառնանք Նորենացուն: Իր «Հայոց պատմության» 2-րդ գրքի ԾԳ գլխում խոսելով Արտաշես Բ թագավորի և նրա որդիների մասին՝ նա նշում է. «...Արտաշեսը Կրոպին որ իմաստուն և բանաստեղծ մարդ էր, նշանակում է հազարապետ... իսկ Մաժանին նշանակում է Անիում Արամազդի կուռքի քրմապետ: Զորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում, արևելյան կողմի զորքը թողնում է Արտավազդին, արևմտյանը տալիս է Տիրանին, հարավայինը հավատում է Սմբատին (Սմբատ Բագրատունուն) և հյուսիսայինը Զարեհին»³⁷: Հետաքրքիր է, որ քրմապետ է նշանակվում այն որդին, որը գնդով ուղարկվել էր Մուրացյան տոհմի նահապետ Արգամի դեմ և հրամանի համաձայն այդ ցեղից շատերին կոտորել (գիրք 2-րդ, գլուխ ԾԱ): Զրմապետի ռազմական հակումների մասին է վկայում նաև 2-րդ գրքի այն գլուխը, որտեղ պատմվում է այն մասին, թե ինչպես Մաժանը, ցանկանալով ձեռք գցել արևմտյան զորքերի սպարապետությունը, Տրայանոս կայսեր առաջ ամբաստանում է իր Տիրան եղբորը: «...Մաժանն այդ արավ, քնն պահած լինելով Սմբատի համար... միևնույն ժամանակ նա կամենում էր Տիրանին էլ հեռացնել, որպեսզի ինքը Ֆիաժամանակ թե քրմապետ լինի, և թե արևմտյան (զորքի) սպարապետ: ...Իսկ Արտավազդն ու Տիրանը նրա այս դավը լսելով, որսի ժամանակ դարան պարզեցին և սպանեցին Մաժանին և տարան թաղեցին Բազանց ավանում (Բազավանում) իբրև քրմապետի»³⁸: Անուստեղ Նորենացին հիշատակում է Արտաշեսի ևս մեկ որդու՝ Տիգրան Կերքինին, որ հաջորդել էր իր եղբայր Տիրանին: Զաղելով Բարդաժանի մատյանից, Նորենացին գրում է. «...Իր մատյանում մեհենական պաշտամունքի վերաբերմամբ (Բարդաժան) պատմում է, թե հայոց թագավոր Տիգրան Կերքինը պատվել է իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բազավանում, Բագրատո գավառում, գերեզմանի վրա բազին շինելով, որպեսզի արդեղի գոհերից վայելեն բոլոր անցորդները և հյուրեր ընդունվեն գիշերելու համար: Հետո Կաղարջն այդ տեղում ժողովողական տոն սահմանեց նոր տարվա սկզբին, Նավասարդի ամսագլխին»³⁹: Նավասարդի ամսագլխին՝ հին Հայաստանում կատարում էին Արամազդի տոնը⁴⁰: Եվ ռազմիկ արքայազնը, դառնալով Արամազդի տաճարի քրմապետ, որպես ավագ պետք է կրեր նաև այդ աստծո անունը. եթե մինչև հիմա ասվածը ճիշտ է: Եվ իսկապես այդ հազվագյուտ անունը, որ այլևս ոչ մի տեղ չի հանդիպում, հին փոքրասիական գերագույն աստծո անունն է, երկրների տիրակալ Մաժան, որ յուրդիացիների մոտ պահպանվել է «Մագանես» ձևով և որը նույնացել է Ջևս-Արամազդին⁴¹: Արդյո՞ք այդ անունը ևս ծիսական էր: Ըստ Մանանդյանի, Նորենացու՝ Արտաշեսի հիշատակած հինգ որդիներից երեքին՝ Զարեհ, Արտավազդ, Տիրան, կարելի է պատմական համարել: Տիգրան Կերքինը հիշատակվում է առանձին և հավանաբար ուրիշ արքայության⁴²: Եվ շատ գաղթակիչ է ենթադրել, որ Մաժանը եղել է այդ արքայություններից որևէ մեկի ծիսական անունը:

³³ Նույն տեղում, էջ 176—187:

³⁴ Ա. Կրկյաշարյան, Նշվ. աշխ., էջ 137—138:

³⁵ Նույն տեղում, էջ 137—138, Գ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 38—39:

³⁶ Փ. Зелинский, Նշվ. աշխ., էջ 122:

³⁷ Նորենացի, Հայոց պատմություն, էջ 122:

³⁸ Նույն տեղում, էջ 124:

³⁹ Նույն տեղում, էջ 135—136:

⁴⁰ Ղ. Ալիշան, Հին հուսարք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 259:

⁴¹ Г. Капанян. Хайаса—колыбель армян, Ереван, 1948, стр. 86—87

⁴² Գ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 163—164:

Ավարտելով նշենք, որ Խորենացու մատյանում կա ևս մեկ քուրմ՝ Անիի Արամազդի տաճարից, Օղյումպը, որի մեհենական պատմությունից Խորենացին քաղել է իր «Պատմության» «Երվանդ-Արտաշես» դրվագը⁴³: Թվում է, թե այս անունն արդեն դիցանունն չէ: Օլիմպիոս անունն է այն դիցաբնակ լեռան, որտեղ իշխում էր Զևսը: Սակայն, ինչպես հունական մյուս աստվածները, հելլենիստական արևելքում Զևսը ևս գերծ չի մնացել անվանափոխումներից, տեղափոխումներից և կերպարանափոխումներից: Ղառնարով Զևս-Արամազդ, Զևս-Տարկու, Զևս-Սաբազիուս, Նա անվանվել է Նակ Դոդոնայի Զևս, Ռոդոսյան Զևս⁴⁴, Օլբական Զևս⁴⁵, ինչպես Նակ Զևս-Հյուրընկալ (Ջսենիոս), Զևս-Պահապան, Զևս-Օլիմպիական («Արին Արամազդ») ⁴⁶: Այդ գիտեր Նակ Խորենացին, երբ գրում էր Սահակ Բագրատունուն, որ կա չորս Արամազդ, «չորոց մի է Կունդ ոմն Արամազդ»⁴⁷: Մակդիրը արդեն ոչ թե շուք տալու, այլ «հովանավորյալ շրջանը» կամ աստծո «դերը» նշելու համար էր: Ընդհանրապես ուշ հելլենիստական շրջանում առկա էր մի պարադոքսալ օրինաչափություն: Զգտումը դեպի միաստվածություն հանգեցնում է այն բանին, որ գերագույն աստծուն սկսում են վերագրել բոլոր մյուս աստվածների ուժերը, սակայն Նրան անընդհատ «մասնատելու» միջոցով: Այդ պատճառով մի երկրում կողք-կողքի իշխում էին եուլյանք մեկ, բնույթով տարբեր մի քանի Զևսեր: Ելնելով անունից, կարելի է ենթադրել, որ Ողյումպ քուրմը եղել է Անիի տաճարում Օլիմպիական Զևսի ավագ քրմապետը: Եվ թող չչփոթեցնի այն փաստը, որ Խորենացին Նրան պարզապես քուրմ է կոչում: Հաճախ այդպես են կոչում քրմապետներին Նակ անտիկ հեղինակները (Ստրաբոնը, Տակիտոսը ևս պարզապես նշում է Տրդատի քրմական պարտականությունների մասին):

Ողյումպ քրմի դիցանվանակիր լինելու մասին մեր այս տեսակետը հաստատող մենք ուրիշ ոչ մի փաստ չունենք, սակայն, խոսելով քրմական դասի մասին ընդհանրապես, կարող ենք ասել, որ երկրի տնտեսական և քաղաքական կյանքում իրենց գրաված դիրքով, իշխող գերդաստանի հետ իրենց ունեցած կապերով հին Հայաստանի քրմապետները ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում երկրի կյանքին, և մեզ հասած հեթանոսական կյանքի կրած փոփոխությունների սակավաթիվ վկայություններն այդ տնտեսական ու քաղաքական իշխանության արտացոլումներն են:

Н. Г. МХИТАРЯН—Жрец-теофор в Древней Армении—Статья является частью работы на тему «Роль жречества в экономической и политической жизни Древней Армении». На основе данных древнеармянских письменных источников, эпиграфических памятников автором выявлено и показано интересное явление в языческой жизни народов Малой Азии и Армении—жрец-теоим, старший жрец, который носил имя того божества, которому служил. происходил из господствующего клана, имел сильную политическую власть и командовал определенным количеством войск.

⁴³ Խորենացի, գիրք 2-րդ, ԼԵ-ԽԹ, էջ 107—117:

⁴⁴ Փ. Зелинский, նշվ. աշխ., էջ 96:

⁴⁵ А. Периханян, նշվ. աշխ., էջ 57—79:

⁴⁶ Ալիշան, Հին հուստոք..., էջ 256—257:

⁴⁷ Խորենացի, գիրք 1, ԼԱ, Պետեր, Հետազոտություն հայ դիցաբանության, Վենետիկ, 1897, էջ 132: